ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1951 Общественные науки

ԳՐԱԽՈՍԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ

ՍՏ. ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ. -«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 5-ՐԴ ԴԱՐՈՒՄ»[1]

ՀԿ(բ)Պ Կենտկոմը 1947 թվին «Հայաստանի պարտիական կազմակերպություններում իդեոլոգիական աշխատանքը ուժեղացնելու միջոցառումների մասին» իր պատմական որոշմամբ հայագետ-պատմաբաններին հանձնարարում էր. «Ուսումնասիրել և լուսաբանել Հայաստանում դասակարգային պայքարի պատմության և օտարերկրյա կեղեքիչների դեմ հայ ժողովրդի ազատագրական շարժման պատմության վերաբերյալ մի շարք թեմաներ»։[2]

Ֆ. Էնգելսը իր մի շարք աշխատությունների մեջ ցույց է տվել, որ միջնադարում ֆեոդալիզմի դեմ ուղղված գրեթե բոլոր հասարակական-քաղաքական շարժումներն արտաքինից ընդունում էին կրոնական քող, դառնում էին աղանդավորական շարժումներ։ Նա իր «Պատմական մատերիալիզմի մասին» աշխատության մեջ միջնադարի աղանդավորական շարժումները գնահատում է հետևյալ կերպ. «Ֆեոդալիզմի դեմ մղվող յուրաքանչյուր պայքար այն ժամանակ պետք է ընդուներ կրոնական զգեստավորում, ուղղվեր առաջին հերթին եկեղեցու դեմ»։[3]

Հայ ժողովրդի պատմական անցյալը հարուստ է սոցիալական շարժումներով։ Միջին դարերում ֆեոդալիզմի դեմ ուղղված այդ շարժումները մեզ մոտ նույնպես գերազանցապես հանդես էին գալիս աղանդավորական քողի տակ։ Այդպիսի շարժումներ են եղել 5-րդ դարում Հայաստանում ծավալված բորբորիտների և մծղնեականների աղանդավորական (ըստ էության սոցիալական-դասակարգային) շարժումները։ Պատմական գիտությունների թեկնածու Ստ. Մելիք-Բախշյանի նշված աշխատությունը վերաբերում է բորբորիտների և մծղնեականների շարժումների ուսումնասիրությանը։ Ինչպես տեսնում ենք, հեղինակի ընտրած թեման չափազանց հետաքրքրքրական է և կարևոր։

Հայտնի է, որ նախասովետական շրջանի հայ պատմագրությունը գերազանցապես զբաղվում էր մեր ժողովրդի միայն քաղաքական պատմությամբ, այն էլ ներկայացնելով կղերա-ֆեոդալական և բուրժուական մեկնաբանությամբ։ Չափազանց բնորոշ են Ստեփան Շահումյանի այդ պատմագրության մասին հետևյալ խոսքերը. «Մենք կարդում ենք շարունակ — գրում է Ստեփան Շահումյանը,— որ Հայաստանը եղել է թալանի ու ավերածությունների ասպարեզ. եկել են պարսիկները կոտորել, թալանել, տարել են, հույները՝ կոտորել, թալանել, տարել են, մոնղոլները՝ կոտորել, թալանել, տարել են, սեփական ազնվականությունը, հոգևորականությունը շարունակ խեղդել, շահագործել են։ Բայց որպեսզի այդ բոլորը հնարավոր լիներ, հարկավոր էր, որ երկրում լիներ կոտորելու համար բավականաչափ ժողովուրդ, և թալանելու համար բավականաչափ հարստություն։ Ինչպե՞ս է ապրել այդ ժողովուրդը, ինչպե՞ս է արտադրելիս եղել նա այդ հարստությունը։ Որո՞նք են նրա արտադրության, արդյունաբերության միջոցները և ձևերը, նրա արհեստները ու արվեստները, նրա առևտուրը և այլ ներքին ու արտաքին հարաբերությունները։ Ի՞նչ տեսակ հասարակական կազմակերպություններ, հիմնարկություններ է ունեցել նա, որոնց միջոցով մղել է իր գոյության կռիվը բնության և օտար հասարակությունների հետ։ Նրա ընտանիքը, նրա արյունակցական, ցեղական կազմի (родовой строй) ձևերը, դասակարգերի առաջացումը և նրանց փոխադարձ հարաբերությունները, պետական մարմնի ուստիճանական զարգացումը և այլն, և այլն։ Ահա թե ինչ պետք է տա մեզ ամենից առաջ բիչ թե շատ լուրջ արժեքավոր պատմությունը»։[4]

---

[1] Տես Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի Պետական համալսարանի գիտական աշխատություններ հատ. 29։

[2] «Սովետական Հայաստան» օրաթերթ, Երևան, 1947, դեկտեմբերի 30։

[3] Ֆ. Էնգելս, Պատմական մատերիալիզմի մասին, տես Կ. Մարքս, Ընտիր երկեր, հ. 1-ին Երևան, 1941, էջ 451։

[4] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Երևան, 1948, էջ 349 350։

Բուրժուական պատմագրությունը չէր բավականանում միջնադարյան Հայաստանի սոցիալական շարժումները անտեսելով. նա այս կամ այն առիթով կրկնում էր հայ եկեղեցական պատմագրության վերին աստիճանի կողմնակալ գնահատականները, որոնցով նրանք թուր ու մուր տին թափում սոցիալական շարժումների հասցեին։

Միանգամայն պարզ է, որ այս հարցերի մասին գրող հեղինակը պետք է հաղթահարեր թե՛ մեր պատմագիրների հաղորդած տենդենցիոզ վկայությունները և թե՛ նախասովետական շրջանի հայագիտության սխալ մեկնաբանությունից առաջացած դժվարությունները։

Բորբորիտների և մծղնեականների շարժումների ուսումնասիրությունը դժվարանում է նաև նրանով, որ նրանց մասին եղած հիշատակությունները վերին աստիճանի կցկտուր ու աղքատիկ են և հաղորդված են շարժման հակառակորդ՝ հոգևորական պատմիչների կողմից։

Չնայած նշված դժվարություններին, հեղինակը հիմնականում հաջողությամբ է լուսաբանել իր առաջ ծառացած հարցերը, և նրա աշխատությունը արժանի է դովասանքի։

Ընկ. Մելիք-Բախշյանը՝ օգտվելով նման շարժումների մասին եղած մարքսիզմի կլասիկների ցուցումներից, իր «Սոցիալական շարժումները Հայաստանում 5-րդ դարում» աշխատության մեջ խոսում է Հայաստանի տնտեսական կյանքի, նրա հասարակության դասակարգային կազմի ու այդ դասակարգերի միջև եղած հարաբերությունների մասին։ Հեղինակը հենց այդ ֆոնի վրա էլ քննության է առնում բորբորիտների և մծղնեականների շարժումները, դրանք միանգամայն ճիշտ կերպով դիտելով որպես սոցիալական-դասակարգային շարժումներ, որոնք ունեին կրոնական քող և ուղղված էին ֆեոդալիզմի դեմ։

Հեղինակը իրաստ քննական մոտեցում է հանդես բերում պատմագիրների և այլ սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների նկատմամբ և գիտական դիրքերից քննադատության է ենթարկում հայագիտության մեջ եղած սխալ տեսակետները հիշյալ շարժումների մասին։

Ստ. Մելիք-Բախշյանի աշխատության ամենակարևոր արժանիքն այն է, որ այդ աշխատությունը սովետահայ պատմագիտության մեջ՝ 5-րդ դարի Հայաստանի սոցիալական շարժումների պատմության ուսումնասիրության բնագավառում, հանդիսանում է առաջին լուրջ փորձը։

«Սոցիալական շարժումները Հայաստանում 5-րդ դարում» աշխատությունը զերծ չէ նաև թերություններից և վիճելի դրույթներից։

Մարքսիստական պատմագիտությունը հասարակական երևույթները ուսումնասիրելիս սովորաբար ելնում է տվյալ ժամանակաշրջանի տնտեսական կյանքի պայմաններից։ Հեղինակը այդ տեսակետից, իհարկե, կանգնած է ճիշտ ուղու վրա. նա նախքան բորբորիտների և մծղնեականների մասին խոսելը, կանգ է առնում 5-րդ դարի Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների վրա։ Սակայն, ցավոք սրտի, այդ հարցի շարադրանքը նա սահմանափակում է միայն 5 էջով (էջ 181—186), որտեղ մի քանի ընդհանուր խոսք է ասված Հայաստանի քաղաքական իրադրության, հողային հարաբերությունների, հասարակության դասակարգային կազմի և աշխատավոր հիմնական դասակարգի՝ գյուղացիության կողմից տրվող հարկերի տեսակների ու դրանց չափերի մասին։ Եվ այդ բոլորը մեծ մասամբ մնում են իբրև սոսկ հայտարարություններ. չեն հիմնավորված սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկություններով։ Հեղինակը բորբորիտների և մծղնեականների շարժումների բնույթը որոշելու համար պարտավոր էր մանրամասն և փաստերով հագեցված տալու այդ դարի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատկերը, առանց որի հիշյալ ազանդավորական շարժումները դառնում են անհասկանալի։ Ինչպե՞ս կարելի է հասարակական այս կամ այն երևույթի մասին դատել, առանց նրա ծնող պատճառները փաստերով ներկայացնելու։ Ընդ որում հեղինակը առանձնապես պետք է ուշադրություն դարձներ 5-րդ դարի քրիստոնեական եկեղեցու ֆեոդալիզացիայի պրոցեսի, նրա կալվածքների մեծության ու տարածության, նրա հիերարխիկ սիստեմի, նրա կողմից կիրառվող շահագործման տնտանելի ձևերի, հարկերի ու տուրքերի չափերի և այլ բազմաթիվ հարցերի վրա։ Հեղինակի ուշադրությունից վրիպել են նույնիսկ այնպիսի հանրահայտ փաստեր, ինչպիսիք են՝ կաթողիկոսական աթոռի 15 գավառներում կալվածքներ ունենալու փաստը (Արմավիրի, Էջմիածնի, Աշտիշատի շրջաններում, Դարանաղի, Եկեղյաց ու Դերջան գավառներում և այլուր)։ Եկեղեցական կալվածները մեծանում էին նաև աշխարհիկ ֆեոդալների կալվածքների հաշվին։ Հայտնի է, որ Խոսրով Կոտակի օրով Մանավազյան և Որդունի նախարարական տները ոչնչացնելուց հետո, իրենց կալվածքները տրվեցին Բասենի եպիսկոպոսական թեմին։

Եկեղեցին, տակավին, 4-րդ դարում այնքան էր հզորացել, որ անգամ հավակնություն ուներ իր ձեռքը վերցնել երկրի քաղաքական իշխանությունը։ Թվում է, թե հենց այդ հողի վրա էր, որ Արշակունի թագավորներից ոմանք ընդհարվում էին կաթողիկոսների հետ (Տիրան, Արշակ Բ.),

իսկ ոմանք էլ (Պապ) եկեղեցու աճող «հեղինակությունը» սահմանափակելու համար հատուկ հրովարտակներով կրճատում էին նրանց կալվածքները և հոգևորական որոշ հիմնարկներ։

Պետք է նշել նաև այն, որ եկեղեցական-կաթողիկոսական կալվածքները գտնվում էին երկրի ամենարերրի շրջաններում։ Այդ էր առիթը, որ Արշակունիների արքունիքի հայտնի գործիչ Հայր Մարդպետը Ներսես կաթողիկոսին սպառնում էր հայոց թագավորի միջոցով Աշտիշատում գտնվող նրա լավագույն կալվածքները գրավել արքունիքի համար։ Վերջապես հեղինակը հնարավորություն ուներ փաստական նյութի հիման վրա ցույց տալու հոգևորականների թվի ահռելի չափերով աճելը, նրանց կաշառակերությունն ու այլ խարդախությունները։ Աշխատության մեջ ոչինչ չի ասված եպիսկոպոսական թեմերի և առանձին վանքերի կալվածքների ու նրանցում աշխատող կախյալ գյուղացիների վիճակի մասին։ Առանց այդ բոլորի, քրիստոնեական եկեղեցու մասին հեղինակի ասած խոսքերը,որոնցով նա քրիստոնեական եկեղեցին բնորոշում է որպես ֆեոդալական շահագործող ապարատ, մնում են իրրև հայտարարություններ։

Այնուհետև, անհրաժեշտ չափով չի վեր հանված ժողովրդական լայն մասսաների ակտիվ մասնակցությունը բորբորիտների և մծղնեականների շարժումներին, որը մասամբ արդյունք է այն բանին, որ հայկական մատենագրության մեջ այս մասին եղած հիշատակությունները չափազանց աղքատիկ են, իսկ օտար աղբյուրները առհասարակ ոչինչ չեն հաղորդում։ Հեղինակի բերած փաստերը՝ Մեսրոպ Մաշտոցի ձեռնարկած միջոցառումները բորբորիտների դեմ, 443 թվի Շահապիվանի եկեղեցական ժողովի որոշումները մծղնեականների դեմ և այլն, բացառապես վերաբերում են բորբորիտների և մծղնեականների շարժումներին մասնակցող կամ հարող հոգևորականներին և իշխաններին (տես էջ 208, 212, 221, 225)։ Բերելով նշված փաստերը, հեղինակը պարտավոր էր բացահայտել ճնշող դասերին պատկանող առանձին վարդապետների, եպիսկոպոսների, իշխանների և այլոց՝ սոցիալական շարժումներին մասնակցելու շարժառիթները։ Կասկածից վեր է, որ ճնշվող մասսաները աղանդավորական այդ շարժումների ձևով պայքարում էին ընդհանրապես ֆեոդալիզմի դեմ՝ իրենց հարվածն ուղղելով առաջին հերթին քրիստոնեական-պաշտոնական եկեղեցու դեմ։ Մեր կարծիքով այդ բարձրաստիճան հոգևորականների մասնակցությունը շարժումներին, պետք է բացատրել քրիստոնեական եկեղեցու ֆեոդալիզացիայի շնորհիվ ստեղծված հիերարխիկ սիստեմով, որի հետևանքով նրանց շահերը շատ նեղ դասային բնույթ էին կրում։ Իսկ աշխարհիկ ֆեոդալների մասնակցությունը առաջին հերթին պետք է բացատրել նրանով, որ եկեղեցին իր կալվածքներով սկսել էր նեղել նաև նրանցից շատերին, որոնք բնականաբար կարող էին այդ շարժումները օգտագործել իրենց շահերի համար։

Հեղինակը աներկբայորեն կանգնած է այն տեսակետի վրա, որ բորբորիտների շարժումը Արևմտյան Հայաստանից բացի տարածված էր նաև Գողթնում, Բաղասականում (Փայտակարան), Գարգմանում և Գուգարքում։ Արևմտյան Հայաստանի Սպեր, Դերջան և Եկեղյաց գավառներում բորբորիտների շարժման և նրա դեմ ձեռնարկված դաժան միջոցների մասին հիշատակություններ ունեն պատմահայր Մովսես Խորենացին և Կորյունը։ Մովսես Խորենացին հաղորդում է, որ Սահակ կաթողիկոսը Մեսրոպ Մաշտոցին հրամայեց «քննել զժանտագործ բորբորիտոնսն, և եթէ ոչ հեղութեամբ և ոչ սաստիւ գայցեն յուղղութիւն՝ շարշարանօք հալածել զի որպէս թշնամիք ի թշնամեաց վրէժ առնուցուն, և խայտառակեսցի իրաւացի մահուամբ անիրաւ մահ հոգւոց»։

Իսկ Կորյունը հաղորդում է, թե Մեսրոպ Մաշտոցը ինչպես իրագործեց Արևմտյան Հայաստանում բորբորիտների աղանդը ճնշելու համար Սահակ կաթողիկոսի տված հանձնարարությունը. «Ապա յետ այնորիկ — գրում է Կորյունը,— ձեռն արկանէր զդժպատեհ և զկամակոր բարբարիանոս աղանդն քննելոյ. Եւ իբրեւ ոչինչ գտանէր հնարս յուղղութիւն ածելոյ, առեալ ի գործ արկանէր զթշուառացուցիչ դաւազանն, ծանրագոյն պատուհասիւք և բանդս, ի տանջանս, գելարանս։ Իսկ յորժամ այնու եւս պակասեալք ի փրկութիւնէն գտանէին, խորտակեալս, և յաշխարհէն կորզէին»[2] Ինչպես տեսնում ենք, երկու պատմիչներն էլ 5-րդ դարի սկզբներին Արևմտյան Հայաստանի Սպեր, Դերջան և Եկեղյաց գավառներում տարածված աղանդավորական շարժումը կոչում են բորբորիտների, (Մ. Խորենացու մոտ՝ «բորբորիտոն», իսկ Կորյունի մոտ՝ «բարբարիանոս» ձևով)։ Այնպես որ Արևմտյան Հայաստանի նշված գավառներում բորբորիտների աղանդավորական շարժման մասին կասկած լինել չի կարող, և հեղինակն այդ խնդրում միանգամայն իրավացի է։ Բայց անհամոզիչ է հեղինակի այն պնդումը, ըստ որի այն ժամանակներում բորբորիտների աղանդավորական շարժումը տարածված էր նաև Գողթնում, Բաղասականում, Գարգ-

[1] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն հայոց, Տփղիս, 1913, էջ 337։
[2] Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 66

մանում և Գուգարքում։ Հեղինակը այս հարցում հետևում է Մ. Չամչյանի, Մ. Օրմանյանի և հայագետ Լանգլուայի առաջ քաշած տեսակետին (էջ 212—214), որը հիմնավորելու համար վկայակոչում է Մովսես Խորենացուն։ Խորենացին հաղորդում է, որ Մեսրոպը «Թողեալ վերակացուս յիւրոց աշակերտացն ի նմին տեղւոջ, զՂևոնդ և զՍնովք ի Սպեր, իսկ ի Դերջան գնոցին եպիսկոպոսն զԳինդ, և յՍկեղեաց զԴանան՝ ինքն եկեալ յԱյրարատ՝ անցանէ յառաջնոյ բնակութեան գաւառն Գողթն։

Քանզի մնացեալ արմատ դառնութեան հեթանոսական աղանդոյն ի ժամանակի անիշխանութեանն ի վեր երևեալ՝ ի բազումս տարածեցաւ. զորս բնաբերձ արարեալ երանելւոյն հանդերձ օգնականութեամբ հօրաբարոյին Գտայ որդւոյ Շաբիթայ,, իշխանի գաւառին, տեղեկանայր ես, չարեացն վարդապետք նախագոյնք ի Բաղասականն են կողմանցս։[1]

Սակայն Խորենացու այս վկայությունը հեղինակի կողմից պաշտպանվող տեսակետի օգտին ոչինչ չի ասում։ Պատմահայրը Սպեր, Դերջան և Սկեղյաց գավառներում տարածված աղանդը պարզապես կոչում է բորբորիտոն, մինչդեռ Գողթնում, Բաղասականում, Գարդմանում և Գուգարքում եղած աղանդը համարում է հեթանոսության մնացորդ։ Նկատի պետք է ունենալ նաև մի այլ մոմենտ. վերը մեջ բերված Կորյունի հիշատակությունից պարզ կերպով երևում է, որ Մեսրոպ Մաշտոցը Արևմտյան Հայաստանում բորբորիտներին ոչ մի կերպ չի կարողացել «ուղղել» («եւ իբրեւ ոչինչ գտանէր հնարս յուղղութիւն ածելոյ») և նրանց դեմ ձեռնարկել է ավելի դաժան միջոցներ («առեալ ի գործ առկանէր զթշուառացուցիչ գաւազանն, ծանրագոյն պատուհասիւք ի բանդս, ի տանջանս, գելարանս»)։ Իսկ նույն Մեսրոպը, Խորենացու վկայության համաձայն, Բաղասականում, Գողթնում, Գարդմանում և Գուգարքում, առանց մեծ դժվարության վերացնում է այդտեղ տարածված հեթանոսական աղանդը։ Նկատի ունենալով այդ երկու փաստերը, պետք է ենթադրել, որ Բաղասականում, Գողթնում, Գարդմանում և Գուգարքում եղած աղանդը կապ չուներ Արևմտյան Հայաստանում տարածված բորբորիտների աղանդի հետ։ Հեղինակի այդ պնդումը անհամոզեցուցիչ է դառնում նաև նրանով, որ աներևակայելի է սկզբից և եթ միևնույն աղանդի տարածումը Հայաստանի երկու ծայրամասերում՝ ծայր արևմուտքում և ծայր արևելքում, որոնք իրարից գտնվում են հսկայական հեռավորության վրա և հասարակական-տնտեսական ամուր կապեր չունեին։

Ընկ. Մելիք-Բախշյանը իր աշխատության մեջ մի ծավալուն բաժին տրամադրել է մանիքեությանը, բայց քանի որ նրա աշխատությունը ունի «Սոցիալական շարժումները Հայաստանում 5-րդ դարում» վերնագիրը, ուստի մանիքեությանը վերաբերող այդ բաժինը միանգամայն ավելորդ է և ոչինչով չի նպաստում 5-րդ դարի Հայաստանի սոցիալական շարժումները լուսաբանելու հարցին։ Հեղինակը ինքն էլ այն կարծիքին է, որ բորբորիտներն ու մծղնեականները կապ չունեին մանիքեության հետ (էջ 187 և 202—206)։ Իհարկե, սրանով մենք չենք ուզում ասել, թե մանիքեության մասին գրելն առհասարակ ավելորդ է, սակայն գրախոսվող աշխատության մեջ այդ մասին լավագույն դեպքում կարելի էր ասել միայն մի քանի խոսք, այնինչ հեղինակը դրան տրամադրել է անհամեմատ ավելի շատ տեղ (18 էջ), քան իր հիմնական թեմային (24 էջ)։

Աշխատության մեջ տեղ են գտել նաև գիտական որոշ անճշտություններ, Այսպես, հեղինակը շինականները և ռամիկները թվում է իրար կողք կողքի՝ նրանց դիտելով որպես հասարակական առանձին խավեր (էջ 182)։ Ակադեմիկ Հ. Մանանդյանը մանրամասն ուսումնասիրելով հին Հայաստանի շահագործող դասակարգերին վերաբերող հիշատակությունները, ցույց է տվել, որ հին Հայաստանում շինականները (գյուղացիները) և քաղաքային ցածր խավը՝ արհեստավորներն ու թերևս մանր առևտրականները միասին կոչվում էին ռամիկներ։[2]

Այլ կերպ ասած, «ռամիկ»-ներ են կոչվել առհասարակ ժողովրդի ցածր խավերը՝ շահագործվողները, իսկ գյուղացիները, որ շահագործվողների թվում կազմում էին ճնշող մեծամասնությունը, կոչվել են շինականներ։ Հետևապես, հեղինակը իր աշխատության մեջ պետք է գործածեր կամ միայն «ռամիկներ» կամ «շինականներ» և քաղաքային ստորին խավեր։

5-րդ դարի հայ նախարարությունների թիվը աշխատության մեջ տրված է 900—50-ի սահմաններում (էջ 184)։ Թվերի այդքան մեծ տարբերությունը ոչ միայն գաղափար չի կարող տալ հայկական նախարարությունների՝ ֆեոդալական իշխանությունների քանակի մասին, այլև կսրող

[1] Մ. Խորենացի, էջ 440—441։

[2] Հ. Մանանդյան, Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին մարդպանության շրջանում (արտատպված ՀՍԽՀ Պետհամալսարանի Գիտական տեղեկագրի № 1-ից). Երևան, 1925, էջ XXIV—XXVII։

է տարակուսանքի առիթ տալ։ Ն. Ադոնցը ելնելով Եղիշեի, Ղ. Փարպեցու, Մ. Խորենացու և մյուս 5-րդ դարի պատմիչների հիշատակություններից, և «Գահնամակ»-ի ու «Ջորանամակ»-ի տվյալներից՝ իր „Армения в эпоху Юстиниана" աշխատության մեջ ցույց է տվել, որ հայկական նախարարությունների թիվը 5—6-րդ դարերում հասնում էր 50—70-ի։ Իսկ որոշ պատմիչների (Փավստոս, Ստ. Որբելյան և այլն) հիշատակած 900 կամ 400 թվերը վերաբերում են ոչ թե նախարարություններին, այլ արքունիքում եղած գործակալություններին։[1]

Ֆեոդալական-նախարարական կալվածքները աշխատության մեջ մի տեղ կոչված են «հոդակտոր»-ներ (էջ 183)։ Նախարարական հսկայական կալվածքների փոխարեն «հոդակտոր» գործածելը ճիշտ չէ։

Հեղինակը դժգոհելով այն բանի համար, որ մեր սկզբնաղբյուրներում շատ քիչ տեղեկություններ կան բորբորիտների մասին, գրում է. «Այդ է պատճառը, որ այս աղանդավորական ուսմունքն ամբողջությամբ վեր հանելը, բավական դժվար է, թեև նա, որպես հայ ժողովրդի անցյալի պատմության կարևոր մոմենտներից մեկը, իր ժամանակին խաղացել է ոչ փոքր դեր եկեղեցու դեմ պայքարի գործում» (էջ 216)։ Ինչո՞ւ միայն եկեղեցու, չէ որ նա ուղղված էր առհասարակ ֆեոդալիզմի դեմ։

Թ. ՀԱԿՈԲՅԱՆ
Հ. ՈՒԹՄԱՋՅԱՆ

[1] Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. СПБ., 1908, стр. 236—297.